

«ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ ԱՐԺԵԹՂԹԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ I» ԱՐԺԵԹՂԹԱՎՈՐՄԱՆ
ՀԻՄՆԱԴՐՄԻ ԿՈՂՄԻՑ
ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՅԱՀԱՅՏՈՒՄ

24 հունվարի, 2017թ.

«ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ ԱՐԺԵԹՂԹԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ I» արժեթղթավորման հիմնադրամի /այսուհետ՝ Հիմնադրամ/ տնօրենների խորհուրդը իր՝ 2017 թվականի հունվարի 23-ի թիվ 23.01.2017-01 Ա որոշումով ուժը կորցրած է ճանաչել խորհրդի 01.12.2016-02 Ա որոշումը, համաձայն որի Հիմնադրամի 2016-2018թթ. ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող անձ ընտրվել էր «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն:

Խորհուրդը այդպիսի որոշում է ընդունել հիմք ընդունելով ներքոշարադրյալը:

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն իր կողմից մրցույթը հաղթելու մասին տեղեկանալուց հետո համապատասխան գրությամբ հայտնել է, որ վերանայում է ի սկզբանե իր կողմից առաջարկված ծառայության գինը և պատրաստ է համագործակցել նոր՝ ավելի բարձր գնով:

Որպես այդպիսի քայլի հիմնավորում ներկայացվել է այն, որ նախնական բանակցությունների ընթացքում իրենց վստահեցվել է, որ «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ին կընձեռվի հնարավորություն նաև Հիմնադրամի կառավարիչ «Կապիտալ Ինվեստմենթս» ՓԲԸ-ի հետ փոխկապակցված այլ ընկերությունների աուդիտն իրականացնել, որն էլ հաշվի առնելով նրանք առաջարկել են իրենց համար տնտեսապես ոչ շահավետ գին: «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ին այդպիսի հնարավորություն ընձեռվել է փոխկապակցված ընկերությունների աուդիտ իրականացնող ընկերության ընտրության հայտարարված մրցույթին մասնակցելու հասցեական օֆերտա նրանց ուղարկելու միջոցով, սակայն մրցույթի մյուս մասնակիցների համեմատ «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի ներկայացրած գնի էապես բարձր լինելու պատճառով վերջինս մրցույթը չի հաղթել: Հատկանշանական է, որ այդ մասին «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի պատասխանատու աշխատակցին տեղեկացնելուց և Հիմնադրամի աուդիտի իրականացման հետ կապված առաջարկի պայմանների նրա վերահաստատումը ստանալուց հետո է միայն խորհուրդը կայացրել որոշում «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ին ընտրել Հիմնադրամի աուդիտ իրականացնող ընկերություն:


Մենք գտնում ենք, որ «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի կողմից գնի վերանայումը արդարացված չէ և չի բխում գործարար վարվելակերպի կանոններից: Այդպիսի գործելակերպը հարիր չէ մեծ փորձառություն ունեցող և ոլորտում բարձր դիրք զբաղեցնող նման աուդիտորական ընկերության համար:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Հիմնադրամը մոտ ապագայում կկազմակերպի աուդիտ իրականացնող ընկերության ընտրության նոր մրցույթ:

Արժեթղթավորման հիմնադրամի կառավարիչ՝

«Կապիտալ Ինվեստմենթս» ՓԲԸ

Գլխավոր տնօրեն



Տիգրան Կարապետյան

